

4.2.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2013թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 669 540 զբոսաշրջիկներ (ՀՀ ռեզիդենտներ)<sup>1</sup>, ինչը 2012թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 30.1%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(մարդ)

	2012թ. հունվար-դեկտեմբերին	Տեսակարար կշիռը (2012թ. հունվար-դեկտեմբերին, %)	2013թ. հունվար-դեկտեմբերին	Տեսակարար կշիռը (2013թ. հունվար-դեկտեմբերին, %)	Աճի տեմպը, %
<b>Ընդամենը զբոսաշրջիկներ<sup>2</sup></b>	<b>514 771</b>	<b>100.0</b>	<b>669 540</b>	<b>100.0</b>	<b>130.1</b>
որոնցից ըստ նպատակի՝					
գործնական	158 655	30.8	156 685	23.4	98.8
հանգստի և ժամանցի	283 513	55.1	381 152	56.9	134.4
բուժման	41 889	8.1	59 903	8.9	143.0
այլ	30 714	6.0	71 800	10.7	2.3 անգ.

<sup>1</sup>Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության (ՉՀԿ) մեթոդաբանության (International Recommendations for Tourism Statistics 2008, Compilation Guide, UN WTO, Madrid, November 2010) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (տվորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունը իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

<sup>2</sup> Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: